



ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Ը. Տարի, Թիւ 11, Նոյեմբեր 2025



**ՅԱԻՐԺԱՆՕՍ ՊԱՏԳԱՍ  
ՀԱԻԱՏՔԻ ԵՒ ԱԶԳԱԿԵՐՏՄԱՆ**

Հայոց պատմութեան ճակատագրական մէկ պահուն հիասքանչ հրաշք մը կատարուեցաւ՝ Գրեթու Գիտը: Սա սովորական դէպք մը չէր, այլ հայրութեան գոյատեւման հիմնաքարն էր որ դրուեցաւ, նոր լուսատու ճանապարհ մը բացաւ, ինքնագիտակցութեան եւ հաւատքի վերածննդեան:

Աստուած հայերէն լեզուով խօսեցաւ մեր ժողովուրդին հետ, եւ հայը առաջին անգամ ըլլալով խորապէս ըմբռնեց աստուածային խօսքի ճշմարտութիւնը: Մեր պատմութեան ամենապայծառ հանգրուաններէն մէկը դարձաւ. հայը սկսաւ մտածել, աղօթել եւ ապրիլ իր սեփական լեզուով, եւ բնականաբար Աստուծոյ կենդանի խօսքը մարմին զգեցաւ իր մէջ:

Գրեթու գիտը հրաշագործ եւ փրկարար դեր ունեցաւ. ան յեղաշրջեց մեր ազգային կեանքը եւ հայուն տուաւ իր ինքնորոշն դիմագիծը: Մերոյ Մաշտոցի եւ Սահակ Պարթեւի սուրբ գործը Աստուածաշունչի հայերէն թարգմանութեամբ, վերածուեցաւ հաւատքի ամրապնդման եւ հոգեւոր ինքնութեան հիմնաքարի: Աստուածաշունչի թարգմանութեամբ հայ ժողովուրդի առջեւ հոգեւոր Նոր աշխարհ մը բացուեցաւ, ուր Աստուծոյ խօսքը դարձաւ ուղղորդիչ եւ կեանքի ուժ տուող մշտադիպ:

Դարեր ետք, մեր ժողովուրդի պատմութեան այլ հանգրուանի մը, նոր հրաշք մը տեղի ունեցաւ՝ Աստուածաշունչի տպագրութիւնը: Ոսկան Երեւանցին իր անսահման նուիրումով, զոհողութիւններով եւ պայծառ տեսլականով փրկեց մեր ազգը հոգեմտաւոր եւ մշակութային ժառանգութեան կորուստէ:

Եթէ Մերոյաստեղծ գրեթով ու յատկապէս Աստուածաշունչի թարգմանութեամբ ամրապնդուեցաւ մեր հաւատքը, ապա Ոսկան Երեւանցիի մեծ զոհողութիւններով ու զրկանքներով, զարմանահրաշ տեսնողով ու մանաւանդ լուսամիտ վարպետութեամբ, հերոսական գործ կատարուեցաւ՝ տպուեցաւ Աստուածաշունչ մատենաը ու բնականօրէն անոր հետեւեցաւ փառաւոր ու հրաշագեղ վերածաղկում մը:

Աստուածաշունչի տպագրութիւնը ոչ միայն մշակութային իրագործում մըն էր, այլ հոգեւոր զարթօնք. ան հայ ժողովուրդը միացուց նոյն եւ մէկ Աստուածային ճշմարիտ խօսքին շուրջ: Այդ խօսքը դարերու ընթացքին եղաւ առաջնորդ, միջնորդութիւն եւ յոյսի մնայուն ներշնչման աղբիւր, երբ մանաւանդ մեր ժողովուրդը տագնապներ կը դիմագրաւէր:

Եթէ Աստուածաշունչի թարգմանութիւնը՝ ճշմարտապէս ամրապնդեց մեր հաւատքը, Աստուածաշունչի տպագրութիւնը ազգայնապէս փրկեց հայ ժողովուրդը: Աստուած հայերէն խօսեցաւ, ու հայութիւնը անդաւաճան ու հաւատարիմ ուխտով մը կապուեցաւ Աստուծոյ խօսքին:

Այսօր, երբ մեր ազգը դարձեալ բազմազան մարտահրաւերներու դիմաց կը գտնուի՝ համաշխարհայնացում, մշակութային ժառանգութեան կորուստի վտանգ եւ հոգեւոր կեանքի բացայկայութիւն, Աստուածաշունչը դարձեալ կուգայ կենդանի իր խօսքը ըսելու: Աստուծոյ խօսքը՝ որ մեր հայրերը թարգմանեցին, տպեցին եւ փայփայեցին, այսօր եւս կը յիշեցնէ ու կը հրաւիրէ մեզ՝ վերադառնալու դէպի աղբիւրը Լոյսին, մեզ քրիստոնէայ եւ հայ պահող:

Եթէ Աստուած հայերէն խօսեցաւ Մերոյ Մաշտոցի ձեռամբ, այսօր ալ ան կը խօսի մեր սրտերուն մէջ՝ մեզ հրաւիրելով նոր Ոսկեդար մը կերտելու, ոչ թէ զենքով կամ իշխանութեամբ, այլ՝ հաւատքով եւ Աստուածային ճշմարիտ խօսքով:

Թող Աստուածաշունչը մեր ազգային դաստիարակութեան անբաժան մասը եւ հայ ընտանիքին անժամանցելի գանձը դառնայ ու մնայ միշտ բաց, անկէ ճառագայթող իր լոյսով ու մանաւանդ իր ՅԱԻՐԺԱՆՕՍ ՊԱՏԳԱՄՈՎ:

ԲԱՐԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**

**ՆՈՅԵՄԲԵՐ՝ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ  
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԻ ԱՄԻՍ**

Հովանաւորութեամբ Գերաշնորհ Տ. Բարգէն Արքեպիսկոպոս Չարեանի եւ կազմակերպութեամբ Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի՝ Գանատայի Հայոց Թեմը կը միանայ Համաշխարհային Աստուածաշունչի Ամսուան տօնախմբութեան:

Նոյեմբեր ամիսը իրայատուկ ժամանակաշրջան մըն է, որ կը հրաւիրէ մեզմէ իրաքանչիւրին վերագտնելու Աստուծոյ կենդանի խօսքը՝ մեր կեանքերու առաջնորդն ու հաւատքի ակունքը:

Աստուծոյ կենդանի խօսքը՝ կեանք կը պարգեւէ եւ կը վերափոխէ մարդուն ներաշխարհը: Ան կը լուսաւորէ մեր միտքը, կը վերանորոգէ սիրտը եւ կը փոխակերպէ կեանքը:

Առաքեալը կ'ըսէ. «Աստուծոյ խօսքը կենդանի է եւ ազդու, անի իստու՝ քան որեւէ երկայրի սուր, եւ կը թափանցէ մարդուս հոգիին մէջ, մինչեւ որն ու ծուծը, եւ կը քննէ մտածումներն ու սրտին խորհուրդները» (Եբր 4.12):

Պօղոս Առաքեալի այս խօսքերը կը յիշեցնեն մեզի, թէ Աստուծոյ խօսքը՝ կենդանի զօրութիւն մը ունի՝ որ կը բժշկէ եւ կը վերակերտէ մարդուն ամբողջ էութիւնը: Երբ մեր սիրտը կը բանանք այդ խօսքին առջեւ, ան լուսաւորէ մեր խաւարացած սիրտերը, կը յուսադրէ մեզ փորձութեանց ժամանակ եւ կը խաղաղեցնէ մեր փոթորկած հոգիները:

Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքը Նոյեմբեր ամիսը կը նուիրէ Աստուածաշունչին հրաւիրելով բոլոր հաւատացեալները՝

- Նորոգելու իրենց հաւատքը,
- Կարդալու եւ ուսումնասիրելու Աստուածաշունչը,
- Ապրելու Աստուածային ճշմարտութիւններուն համաձայն:

Այս ամիսը թող դառնայ հոգեւոր նորոգութեան շրջան: Թող Աստուծոյ խօսքը վերստին վառէ մեր հաւատքի ճրագը եւ առաջնորդէ մեզ խաղաղութեան, սիրոյ եւ արդարութեան ճանապարհով:

**ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ  
ԲԱԺԱՆՄՈՒՆԷ  
ԳՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ**

**ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ**

«Աստուծոյ ներշնչումով գրուած բոլոր Սուրբ Գիրքերը օգտակար են՝ թէ՛ ճշմարտութիւնը ուսուցանելու եւ թէ՛ սխալը հերքելու, մարդս ճիշդ ճամբու մէջ դնելու եւ արդար կեանքի մը դաստիարակութիւնը տալու համար» (Բ. Տմ 3:16):

“All Scripture is God-breathed and is useful for teaching, rebuking, correcting and training in righteousness.” (2 Timothy 3:16)





### ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԾՇՄԱՐԻՏ ԴԻՄԱԳԻԾԸ

**Եկեղեցին Հայկական բարձր բերդն է հաւատքին  
Իմ պապերուս՝ որ հողէն զայն քար առ քար հանեցին  
Ու երկինքէն իջուցին զայն ցօղ առ ցօղ, ամպ առ ամպ,  
Ու թաղուեցան անոր մէջ հանդարտութեամբ, հեզութեամբ...:  
ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ**

Հայ ժողովուրդի մէկ դարաւոր ու անկորնչելի հաստատութեան՝ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ գոյութեան ու անմահութեան գաղտնիքը իրենց մէջ խտացնող բառեր են անմահ հոգիի մը քուրալայէն ժայթքած ու դարերուն կտակուած սա փունջ մը անթառամ բառերը:

Ու սա ալեկոծ ժամանակի թոհուրոհին մէջ, երբ մարդոց կեանքի փառքի ու մամոնայի վազք է, հեւք է, տեղ մը ակոյի ու աղիքի տրտում պայքար, այլ տեղ մեքենայի ու մետաղի աղմուկ, երբ երկրաւոր կեանքէն վեր դէպի տիեզերական ճշմարտութիւններ ու հոգեւոր արժէքներ տանող ճամբաները յաճախ մշուշուած են ու փոշոտած, որքան խորթ կրնան հնչել սա բառերը մեր ականջներուն, ուր ամէն ժամ ու ամէն վայրկեան կը հասնին բազմատեսակ ծայներ աշխարհի չորս ծագերէ: Բայց, կը հնչեն անմահ բառերը բանաստեղծին, կը հնչեն խոր ու երկար հոգիներուն մէջ անոնց որոնք լեցուն են հայ պատմութեամբ, կը հնչեն անոնք միտքերուն մէջ անոնց որոնք իրենց լոյսը կ'առնեն հայ ականքներէն ու սիրտերուն մէջ անոնց որոնք կը բարսխեն հայ կեանքի բազկերակով:

Եկեղեցին Հայկական... ինչ սուրբ ու նուիրական բառ է սա՝ հայ պատմութեան էջերէն աղբերացող, մէն մի հայու շրթներէն ծորող... հայ պատմութեան ու հայ լինելութեան անհիմանայի խորհուրդն է ծրարուած սա զոյգ մը անքակտելի բառերուն մէջ:

Եկեղեցին Հայկական... Աւետարանի ականաղբիւրէն ցայտող ու հայ հոգիի անդաստանին մէջ իր արմատները նետող ու զայն աստուածային շունչով ու Աւետարանի հոգեւոր ճշմարտութեամբ ու բարձր սկզբունքներով թրծող ու ջերմացնող քրիստոսաշէն տաճար:

Եկեղեցին Հայկական... հայ կեանքի դարաւոր ու արինոտ ճամբուն վրայ հայ ժողովուրդի հոգեւոր ու ազգային դիմագիծը առողջ ու պայծառ պահող աստուածապարգեւ հաստատութիւն:

Եկեղեցին Հայկական... անկորնչելի յիշատակարանը մեր հերոսական պատմութեան, մեր ոսկի մշակոյթին. ուխտի տապանակը հայ ցեղին, որուն մէջ դեռ կը պահուի իր կորսուած երկրաւոր իշխանութեան գաւազանը, յոյսի ջահը:

Եկեղեցին Հայկական... հայ ժողովուրդի միութեան ամրակոտ խարիսխը, մեր հաւաքական կամքին ու վճռակամութեան դարբնոցը, մեր ազգային լինելութեան աղբիւրը, մեր մաքառումներուն ու խոյանքներուն ներշնչարանը:

\*\*\*

Թող բացուին սա պահուն ձեր մտքերուն մէջ մեր պատմութեան էջերը ու այդ էջերը լեցնող դէպքերն ու դէմքերը թող կեանք զգենուն կազմելու համար մեր անցեալի կեանքը իր արինով ու վերքով, փառքով ու յաղթանակով, աւերով ու ստեղծագործութեամբ: Ու դիտեցէք դուք, խորաթափանց աչքերով, մեր ժողովուրդի անցեալի կեանքի պատկերին մէջ Հայ Եկեղեցին իր կեանքով ու առաքելութեամբ, իր պայքարով ու իրագործումներով: Ու ահա այն ատեն դուք կը հասկնաք խորունկ գաղտնիքը մեր անմահութեան. եւ ահա այն ատեն դուք կը հասկնաք գաղտնիքը այն անբացատրելի ու խոր սիրոյն, որ այս ժողովուրդը կապեց աստուածապարգեւ այս հաստատութեան, զայն դարձուց հոգեւոր հայրենիք, ուր մեր պապերը լոյս փնտռեցին ամէն անգամ երբ խաւարն իջաւ ու թանձրօրէն պատեց երկինքն հայ աշխարհին, ուր մեր պապերը լոյս փնտռեցին մեր պատմութեան ամենէն տազնապալի ու ճգնաժամային պահերուն: Ու միթէ Աստուածամատենի լուսաւոր ականքներէն ժայթքող ու երկնքի ամպամած ոլորտներէն Հայաստան աշխարհի վրայ բացուող ու ծիածանոտող այդ լոյսէն ու յոյսէն եւ զանոնք հայ կեանքին հետ շաղախող քրիստոնէական խորունկ հաւատքէն չէր արդեօք, որ արեան ու աւերին մէջ իսկ «փոքր ածուն» պիտի ունենար կամքը՝ ապրելու, կորովը՝ պայքարելու ու գոյատեւելու, լոյսը՝ արարելու ու անմահանալու նոյնիսկ մահուան մէջ ... «մահուամբ մահը յաղթելով»:

Ու պատմութիւնը ցոյց կու տայ թէ ինչ որ ունեցաւ հայութիւնը իբրեւ հոգեւոր ու բարոյական դիմագիծ, «արութեան» մեծ գործերով լեցուն պատմութիւն ու ստեղծագործական երկունքով բեղուն կեանք, զայն կը պարտի Հայ Եկեղեցւոյ, որովհետեւ այս վերջինը ինքզինք ամբողջութեամբ նոյնացուց հայ ժողովուրդի կեանքին հետ, անոր տառապանքին, երազներուն ու իտէալներուն հետ:

(Շարունակելի 1)

**ԱՐԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՔԷՇԻՇԵԱՆ  
ԱՅԺՄ՝  
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

### ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՕԹՔ

Սուրբ Աստուած, անմահ եւ հզօր. դուն որ սրբաբանութեամբ եւ անդադրում օրինաբանութեամբ կը պաշտուիս հրեղէն եւ անմարմին հրեշտակներուն կողմէ: Մենք, քու ձեռքով ստեղծուած բանաւոր հօտդ, քու առատաբաշխ գթութիւնդ կը հայցենք:

Ընդունէ՛ մեր շրթներէն ու մեր սրտերէն դուրս եկած բանաւոր ընծաները:

Ո՛վ Տէր, մեր միտքերուն մաքրութիւն տուր, սրտերուն՝ զղջում, շրթներուն՝ ճշմարտութիւն, աչքերուն՝ արցունք, հոգիներուն՝ ամբօթութիւն, եւ մարմիններուն՝ սրբութիւն:

Լեցնի՛ր մեզ ամէն առաքինութեամբ, պայծառ հաւատքով, աներկբայ յոյսով եւ մաքուր սիրով: Եւ զարդարէ՛ մեզ՝ խոհեմութեամբ, ողջախոհութեամբ, արիւթեամբ եւ արդարութեամբ:

Զօրացնի՛ր մեզ, որպէսզի յաղթող ըլլանք Բանասարկուին հնարքներուն դէմ, կարենանք մարել Չարին բոլոր միացող նետերը, եւ արդարութեամբ եւ աստուածապաշտութեամբ ապրիլ աշխարհին մէջ, ինչպէս որ դուն կը կամենաս, իսկ այս կեանքէն ետք անճառելի բարիքներդ կարենանք վայելել քեզի՝ Տիրոջդ հետ, որուն կը վայելեն փառքն ու զօրութիւնը յալիտեանս:

ԱՄԷՆ:

### ՅՈՅՈՎ ԱՊՐԻԼ

Լաւատեսութիւնն ու յոյսը մեծապէս տարբեր հոգեվիճակներ են: Լաւատեսութիւնը այն անկախութիւնն է, թէ այսինչ կամ այնինչ երեւոյթները, ինչպէս կ'իման, մարդկային յարաբերութիւնները, տնտեսութիւնը, քաղաքական վիճակը, եւայլն պիտի բարելաւուին: Իսկ յոյսը՝ այն վստահութիւնն է, թէ Աստուած պիտի կատարէ մեզի տուած իր խոստումները, այնպէս, որ անոնք մեզ պիտի առաջնորդեն դէպի ճշմարիտ ազատութիւն:

Լաւատեսը զալիք ճշգրիտ փոփոխութիւններու մասին կը խօսի, իսկ յուսալից մարդը պահը կ'ապրի ամենայն գիտակցութեամբ եւ վստահութեամբ, թէ ամբողջ կեանքը ապահով ձեռքերու մէջ է:

Պատմութեան մէջ իրենց հետքը ձգած բոլոր հոգեւոր առաջնորդները յոյսի մարդիկ են եղած: Աբրահամ, Յակոբ, Մովսէս, Հռութ, Մարիամ, Կանտի... բոլորը ապրեցան խոստումով մը, որ զիրենք առաջնորդեց դէպի բոլորովին անձանօթ ապագան: Ուստի յոյսով ապրինք:

**ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՅՐ  
ՇԵՆՐԻ Ծ. Մ. ՆՈՒԸՆ  
Հայացուց՝ Մակար Արք. Աշգարեան**

### ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԷՆ ԱՌԱՋ

Տէր Յիսուս Քրիստոս, բաց իմ սրտիս աչքերն ու ականջները, որպէսզի լսեմ քու կամքը:

Կը հաւատամ, Տէր, որ կը լուսաւորես իմ սիրտս, որովհետեւ Դուն ողորմած Աստուած ես: Եւ քեզի փառք յալիտեանս:

ԱՄԷՆ:





**ՀԱՍՎԱՆՔ ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ  
ՃԱՇՈՒ ԺԱՄ, ԿԱՄ ԵՐԱՒԱՅՅՑ ՊԱՏԱՐԱԳ**

**ՀԱՄԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՔԱՐՈՉ**

«Սուրբ Աստուած»ին կը յաջորդէ «Համաշխարհական Քարոզ»ը: Եկեղեցական լեզուին մէջ մենք «քարոզ» կը կոչենք Սարկաւագին կողմէ բարձրաձայն եւ եղանակաւոր հրահագները կամ յորդորները, որ անիկա կ'ուղղէ ժողովուրդին, թելադրելով այն՝ ինչ որ ժողովուրդը պէտք է ընէ (օրինակ՝ «օրթի» [=ոտքի], «Աստուծոյ երկիրպագեսցուք» [=Աստուծոյ երկիրպագենք], «երկիրաճութեամբ լուարուք» [=երկիրաճութեամբ լսեցէք], «ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան» [=Սուրբ համբոյրով ողջունեցէք իրար], «առողրունս ելէք եւ աղօթեցէք» [=հորս ելէք եւ աղօթեցէք], ելն.): Քարոզ կը նկատուին նաեւ այն՝ ինչ որ ժողովուրդը պէտք է ըսէ (օրինակ՝ «Եւ ես խաղաղութեան գՏէր աղաչեսցուք» [=Դարձեալ խաղաղութիւն աղերսենք Տիրոջմէ], «Ասացուք ամենքեան միաբանութեամբ» [=բոլորս միաբերան ըսենք], «Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերում, դպիրք» [=Դպիրներ, Սաղմոս երգեցէք մեր Աստուծոյն], ելն.):

Արդ, այս հանգրուանին Սարկաւագը կը յորդորէ ժողովուրդը, որ Աստուծմէ խնդրէ՝ աշխարհին խաղաղութիւն, սուրբ Եկեղեցիին անասանութիւն, եւ աղօթե՛լ եկեղեցոյ պաշտօնէութեան՝ դպիրներուն, սարկաւագներուն, քահանաներուն, վարդապետներուն, Եպիսկոպոսներուն ու հայրապետին համար, բոլոր հաւատացեալներուն եւ անոնց հոգիի փրկութեան համար, գերեալներուն, ճամբորդներուն, հիւանդներուն, ուխտաւորներուն եւ հանգուցեալ հոգիներուն համար. մէկ խօսքով՝ ամբողջ Եկեղեցոյ համար, իր զինուորեալ եւ յաղթական բաժիններով:

**ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**

Համաշխարհական Քարոզէն ետք կը կատարուին աստուածաշնչական ընթերցումները, որոնք Ս. Պատարագի խորհուրդին երկու առանցքներէն առաջինը կը կազմեն: Ասիկա, ինչպէս ըսինք, «Աստուծոյ Խօսքին ընծայում»ն է:

Եկեղեցոյ կեանքին մէջ աստուածաշնչական ընթերցումները միշտ ալ ուսուցողական դեր ունեցած են: Անցեալի, Մովսէսի ձեռքով Օրէնքը եւ մնացեալ ուսուցումները իր ժողովուրդին տալէ ետք, Աստուած Մովսէսի ձեռքով հրահանգեց քահանաներուն, որ տարուէ-տարի այդ օրէնքներն ու ուսուցումները բարձրաձայն կարդացուին ի լուր, որպէսզի գիտցողները անոր մէջ արմատանան, իսկ չգիտցողները, նորեկները եւ նոր սերունդը լսեն եւ անով դաստիարակուին (հմմտ. Բ. Օր 31.9-13):

Հետագային, ինչպէս արդէն յիշտակեցինք, ժողովարաններու մէջ պաշտամունքին կեդրոնը կը կազմէին աստուածաշնչական ընթերցումները, երբեմն անց կցուած բացատրութեամբ եւ կամ պատգամով մը: Քրիստոնէական Եկեղեցին, հազիւ տաճարէն ու ժողովարաններէն դուրս եկած եւ անկախացած՝ որդեգրեց աստուածային ընթերցումներով ինքզինք դաստիարակելու այս կերպը:

Եւ ահա, բուն Պատարագի խորհուրդին կցուած առաջին յաւելումը ընթերցումներու այս բաժինը եղաւ, համահաւասար կարեւորութեամբ:

Այստեղ կը շեշտենք «համահաւասար կարեւորութեամբ» բառերը, որովհետեւ յաճախ անիրաւ կերպով անտեսուած է կարեւորութիւնը այս բաժինին, որ սակայն, անհրաժեշտ նախապատրաստութիւնն է յաջորդին՝ Քրիստոսի Զոհագործման խորհուրդին:

Սաղմոսին բառերով «Ճաշակեցէք եւ տեսէք զի քաղցր է Տէր» պիտի երգենք Պատարագի աւարտին: Բայց ճաշակումը երկու տեսակի է, նախ մտքով՝ հոգեւոր ճաշակումը Աստուծոյ Խօսքին, եւ ապա շրթներով՝ մարմնատր ճաշակումը մեր Տիրոջ Մարմնին եւ Արեան: Խորքին մէջ այս երկուքը նոյնն են, երկու տարբեր կերպերով երկուքով ալ Աստուծոյ Խօսքը՝ Բանը կը ճաշակենք, մէկը՝ իր անմարմին վիճակով, միւսը՝ մեզի համար մարմնացած վիճակով:

Աստուածաշնչական ընթերցումները Աստուծոյ ձայնն է, որ լսելի կը դարձնեն եւ Աստուծոյ ինքնութիւնն ու կամքը կը յայտնեն մեզի: Անոնք մեզ կը պատրաստեն աւելի մեծ յայտնութեան մը՝ զինք դէմ յանդիման տեսնելու քիչ ետք, սուրբ Սեղանին վրայ դրուած, իբրեւ զոհագործուած «Աստուծոյ անարատ Գանուկը»:

Առաջին բաժինը հետեւաբար, մարդուն հոգեւոր պատրաստութիւնն է Աստուծոյ հետ այս մարմնատր հանդիպումին, մինչ երկրորդ բաժինը՝ Աստուծոյ ինքնընծայումն է մեզի, մեր եւ ամբողջ աշխարհի փրկութեան համար:

**ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԵՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**

Մարգարէական եւ առաքելական գիրքերէն քաղուած ընթերցումը կը կատարուի դասի կեդրոնէն, այսինքն՝ «վար»էն, ժողովուրդին մէջէն: Ասիկա իր յատուկ իմաստը ունի: Մարգարէներն ու առաքեալները աշխարհի մէջ ներկայացուցիչն են արձագանգն են աստուածային ձայնին. առաջինները իբրեւ «յառաջագոյն տեսանողները» Աստուծոյ Որդւոյն աշխարհ գալուստին ու մեր փրկութեան, իսկ երկրորդները՝ իբրեւ «աւետաւորներն ու սպասաւորները Բան Աստուծոյ»:

Մինչդեռ, Աւետարանը պէտք է անպայմանօրէն Ս. Բենէն կարդացուի: Անով՝ մարմնացեալ մեր Աստուածը ինք է որ ուղղակիօրէն կը խօսի մեզի: Անոր համար է, որ զայն կարդալէ առաջ Սարկաւագը կը հրահանգէ՝ «Երկիրաճութեամբ լուարուք» (=երկիրաճութեամբ լսեցէք), իսկ ժողովուրդը (ներկայիս՝ դպիրները) երկիրաճութեամբ կ'ըսէ. «Ասէ Աստուած» (=Աստուած կը խօսի):

**(Շարունակելի 5)  
«ՀԱՍՎԱՆՔ ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ»  
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ,  
ԿԱՌՈՅՑԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ  
ՉԱՐԵՇ ԱՐՔ. ԱՂՆԱՌՈՐԵԱՆ**

**ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ**

**ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ**

**ՀԱՅ ԱՂԳԸ ԵՐԲ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԵՂԱԻ:**

Քրիստոնէութիւնը սկիզբէն մուտք գործեց Հայաստան, շնորհիւ Սուրբ Թադէոս եւ Սուրբ Բարթողիմէոս առաքեալներուն:

**ԱՅԴ ՍՐԲԱԶԱՆ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԻՆՉԵՐ ԸՐԻՆ:**

Սուրբ Թադէոս բժշկեց Աբգար թագաւորի հիւանդութիւնը. մկրտեց զայն եւ իր ընտանիքը, եկեղեցիներ շինեց եւ Եպիսկոպոսներ ձեռնադրեց: Սուրբ Բարթողիմէոս առաքեալ Անձեւացեաց գաւառին մէջ Հոգեաց վանքը հիմնեց, նաեւ կառուցեց շատ մը եկեղեցիներ եւ քահանաներ ձեռնադրեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՌՈՐ ԹՇՆԱՄԻՆ Ո՛Վ ԵՂԱԻ:**

Սուրբ Աբգար թագաւորի քեռորդին՝ Սանատրուկը, որ ուրանալով քրիստոնէութիւնը՝ որէն կոապաշտութեան դարձաւ, եւ մտցնել տուաւ Սուրբ Թադէոս եւ Սուրբ Բարթողիմէոս առաքեալները, իր աղչիկը՝ Սուրբ Սանդուխտ Կոյսը, եւ ուրիշներ:

**ՈՒՐԵՄՆ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆԸ ԽԱՐԱՆՈՒԹՅԱՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ:**

Հակառակ ամէն տեսակ հալածանքներուն, քրիստոնէութիւնը ծածկ մնաց եւ աստիճանական կերպով տարածուեցաւ, մինչեւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ:

**Ո՛Վ Է ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ:**

Սուրբ Գրիգոր Հայոց Երկրորդ Լուսաւորիչն է, որ 301 թուականին հայ ազգը քրիստոնէութեան դարձուց եւ կոապաշտութիւնը ջնջեց:

**ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՈՐՈՒՆ ԶԵՌԱՍԲ ԵՂԻՍԿՈՊՈՍ ԶԵՆԱՂՐՈՒԹՅԱՒ:**

Սուրբ Գրիգոր Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Կեսարիոյ Սուրբ Ղեւոնդ Հայրապետէն, որ Թադէոս առաքեալին ձեռնադրած Թէոփիլոս Եպիսկոպոսին յաջորդն էր:

**ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՀԱՅՐԱՊԵՏԸ Ո՛Ր ՀԱՍՏԱՏԵՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՐԸ:**

Սուրբ Լուսաւորիչ հայրապետական աթոռը հաստատեց Վաղարշապատի Սուրբ Էջմիածին Մայր Տաճարին մէջ, զոր շինել տուաւ՝ Քրիստոսի կողմէ իրեն ցոյց տրուած տեսիլքին համաձայն:

**A PRAYER FOR PROTECTION  
AND STRENGTH**

**PSALM 91**

Whoever goes to the Lord for safety,  
whoever remains under the protection of the Almighty,  
can say to him,  
“You are my defender and protector.  
You are my God; in you I trust.”  
He will keep you safe from all hidden dangers  
and from all deadly diseases.  
He will cover you with his wings;  
you will be safe in his care;  
his faithfulness will protect and defend you.  
You need not fear any dangers at night  
or sudden attacks during the day  
or the plagues that strike in the dark  
or the evils that kill in daylight.  
A thousand may fall dead beside you,  
ten thousand all around you,  
but you will not be harmed.  
You will look and see  
how the wicked are punished.  
You have made the Lord your[a] defender,  
the Most High your protector,  
and so no disaster will strike you,  
no violence will come near your home.  
God will put his angels in charge of you  
to protect you wherever you go.  
They will hold you up with their hands  
to keep you from hurting your feet on the stones.  
You will trample down lions and snakes,  
fierce lions and poisonous snakes.  
God says, “I will save those who love me  
and will protect those who acknowledge me as Lord.  
When they call to me, I will answer them;  
when they are in trouble, I will be with them.  
I will rescue them and honor them.  
I will reward them with long life;  
I will save them.”





## ՆԻԿԻՅՑ ՏԻԵՉԵՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎԻ 1700-ԱՄԵԱԿ

«Չարչարեալ, խաչեալ, թաղեալ»:

### 1.- ԱՅՍՊԵՍ ԳՐՈՒԱԾ ԵՐ ԵՒ ԱՅՍՊԵՍ ՊԵՏՔ ԵՐ ԿԱՏԱՐՈՒԵՐ (ՂԿ 24.44) - ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ՆԱԽԱԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ՉԱՐՉԱՐՈՒՈՂ ԾԱՌԱՅԻՆ ՄԱՍԻՆ:

Ինչպէս ամբողջ Աստուածաշունչին մէջ, այնպէս ալ Հաւատամքին մէջ բանալի բառ է «Չարչարեալ»ը, որ Աստուծոյ, փրկագործական ծրագիրին ճշմարիտ հասկացողութիւնը կը բանայ մեր դիմաց:

Հին Կտակարանին մէջ այդ ծրագիրը կը նախապատկերացուի քաւութեան զոհերով, եւ ապա կը նախաձայնուի Օրէնքով ու մարգարէներով: Ամէն մեղք գործող մահուան դատապարտուած է (Եզ 18.4): Արդ, որովհետեւ բոլոր մարդիկ մեղքի մէջ են, բոլորն ալ մահուան դատապարտութեան տակ են: Զոհերու արիւնը միայն խորհրդանշական քաւութիւն մը կու տար իրենց, պարզապէս մատնանշելով՝ թէ Աստուած ճշմարիտ քաւութիւնը պիտի տայիր ընտրած յատուկ Զոհով, որ կենդանիներուն մէջէն ընտրուած պիտի չլլար, բայց որ խորհրդանշականօրէն պիտի կոչուէր «Աստուծոյ Գառնուկը, որ աշխարհի մեղքը կը վերցնէ» (Յի 1.29): Եսայի մարգարէ այդ Զոհը կը նշանակէ Օծեալին հետ, կամ Աստուծոյ ընտրեալ Ծառային հետ, որ իր չարչարանքներով մեր անօրէնութիւնը պիտի վերցնէր ու մեզ հոգեւորապէս բժշկէր ու փրկէր (տես Ես 53-րդ գլուխ):

Նոր Կտակարանը մեզի ցոյց կու տայ կատարումը այդ խոստումներուն: Քրիստոս ինք ցոյց տուաւ թէ ամբողջ Հին Կտակարանը իր մասին է որ կը խօսի (Յի 5.39), թէ իր կենանքն ու չարչարանքները կատարումն են բոլոր գրուածներուն (Մտ 16.21-23, 20.17-19, 26. 53-54: Հմմտ Ա. Կր 15.3-4), եւ ինք պէտք է իր կենանքը տայ բոլոր մարդոց փրկութեան համար (Մր 10.46: Գրծ 26.22-23: Ա. Տմ 2. 5-6: Տիտ 2.14):

### 2.- ՉԱՐՉԱՐԵԱԿ, ԽԱՉԵԱԿ:

Չարչարանքները միայն խաչին վրայ ապրուած տանջանքները չեն, այլ՝ համապարփակ կերպով այն բոլոր փորձութիւնները, նեղութիւնները եւ տառապանքները, որ Աստուածորդին կամաւորապէս կրեց, անոնց ընդմէջէն մեզի փրկութիւն բերելու համար: Չարչարանքներուն յրումը մահն է անշուշտ: Իսկ եթէ Հաւատամքին մէջ մահը չի յիշուիր, պարզապէս անոր համար՝ որ առիկա ինքնաբերաբար կը հասկցուի թէ՛ «խաչեալ» բացատրութենէն եւ թէ՛ հետեւող «թաղեալ» բացատրութենէն:

### 3.- ԱՍՏՈՒԱԾ ԻՆՉՊԵՍ ԿՐՆԱՅ ՉԱՐՉԱՐՈՒԻԼ:

Աստուածութիւնը ինչպէս կրնայ չարչարուի: Չէ՞ որ Աստուած անչարչարելի է: Թէպէտեւ աստուածութիւնը անչարչարելի է, բայց չարչարուեցաւ՝ մարմնովը: Նոյնպէս, անմահ է աստուածութիւնը, բայց, ինչպէս կ'ըսէ Պօղոս առաքեալ, Յիսուս «Հրեշտակներէն քիչ մը վար դատուեցաւ՝ մահուան չարչարանքը յանձն առնելու համար, որպէսզի Աստուծոյ շնորհքով բոլոր մարդոց փոխարէն մահը ճաշակէ» (Եբր 2.9): Այսպէս ըլլալով հանդերձ, երբեք չենք ըսեր՝ թէ Քրիստոսի մէջ միայն մարդը չարչարուեցաւ, այլ՝ Աստուածորդին ինքը չարչարուեցաւ իր մարմնով:

Տեսանք, թէ Եկեղեցին կը դաւանի Քրիստոսի կատարեալ աստուածութիւնը՝ անշփոթ եւ անբաժանելի կերպով միացած կատարեալ մարդկութեան: Երկու կատարեալ բնութիւններէն մէկ եւ միակ միացեալ, միատրեալ բնութիւնն է այլեւս անիկա, եւ ուստի խաչելութիւնը, մահն ու յարութիւնը առանձին մարդկային բնութեանը չեն, այլ՝ միատրեալ մէկ բնութեանը: Այս անշփոթ եւ անքակտելի միատրութեան պատճառով՝ Քրիստոսի աստուածութեան յատուկ եղող բաները կ'ընծայուին նաեւ մարդկութեան, ինչպէս որ մարդկութեան յատուկ բաները կ'ընծայուին աստուածութեան:

### 4.- ՔՐԻՍՏՈՍԻ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐՈՒՆ ՓՐԿԱԳՈՐԾԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ:

Քրիստոս կամաւորաբար յանձն առաւ չարչարանքները, մարդոց փրկութեան համար:

### 5.- ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱՂՈՒՄԸ ԵՒ «ԴԺՈՒՔ ԻՋՈՒՄԸ»:

«Թաղեալ» բացատրութիւնը Քրիստոսի ճշմարտապէս մեռած ըլլալը ցոյց կու տայ, իրրեւ պատասխան անոր մահը ուրացողներուն: Այս առիթով Նոր Կտակարանը կը հաստատէ, թէ Քրիստոս իր հոգիով գնաց քարոզեց բանտի մէջ գտնուող հոգիներուն (Ա.Պտ 3.18-19): Այդ «բանտը» մեռելներու աշխարհն էր, ուր Քրիստոս իջաւ՝ անոնց ալ աւետելու համար իր բերած փրկութիւնը, որուն կը սպասէին անոնք եւ: Քրիստոս գնաց բնաջնջելու մահուան իշխանութիւնը, եւ ազատելու համար Հին Կտակարանեան ժամանակի բոլոր արդարները:

### 6. Ո՛ՒՐ ԵՆ ՄԵՌԵՆՆԵՐԸ ՀԻՄԱ:

Հողեղէն ամէն գոյութիւն մահկանացու է: Մարդը ինք ալ հողեղէն է: Եւ թէպէտ իրեն շնորհուած էր կարելիութիւնը Կենաց Ծառէն (Ծն 2.9) ճաշակելով անմահ մնալու, բայց իր անհնազանդութեամբ մարդը կորսնցուց այդ վիճակը եւ իրրեւ մարմին՝ սահմանուեցաւ մահուան: Բայց մարդը նաեւ հոգի է, եւ հոգին ինք անմահ է: Մահը հոգիին անջատումն է մարմինէն: Արդ, ինչ կ'ըլլայ եւ ո՞ր կ'երթայ մարմինէն անջատուած հոգին:

Արեւելի բոլոր եկեղեցիները, ինչպէս նաեւ Հայոց Եկեղեցին, իրաքանչիւր մարդու վերջնական հատուցումը կապուած կը տեսնեն ընդհանրական այն միակ դատաստանին, որ կապուած է Քրիստոսի երկրորդ գալուստին եւ մեռելներու յարութեան (Յյտ 20.11-15): Ո՛ւր են հոգիները մինչ այդ: Անոնք բոլորը միատեղ կը մնան աննիթական «վայր»ի մը մէջ, որ քրիստոնէական գրականութեան մէջ կը կոչուի «հոգիներու կայան»: Անոնք թէպէտ այժմ դատաստանին սպասման վիճակի մէջ են, բայց իրենց սպասող արդար հատուցումին գիտակ են հիմակուրնէ, եւ ըստ այնմ ալ կը նախաճաշակեն իրենց յաւիտենական երանութիւնը կամ տանջանքը:

Հայաստանեայց Եկեղեցին առանձնական դատաստան եւ անմիջական հատուցում չի ճանչնար, որովհետեւ Աստուածաշունչը յայտնապէս հակառակը կ'ուսուցանէ (Եբր 11.39-40, Յյտ 6.9-11): Իսկ Քաւարանի մը մասին Աստուածաշունչը ոչ մէկ խօսք ունի:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ  
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՒԱՍԱՄՔԻՆ  
Չարեհ Արք. Ազնաւորեան  
(Շարունակելի 8)

## THE BOOK OF PSALMS

WRITTEN: OVER A VERY LONG TIME PERIOD  
ALMOST THE WHOLE OF OLD TESTAMENT HISTORY

### WHAT YOU NEED TO KNOW:

Psalms is a big book of poems and songs about God and to God. The cover every situation - joy and celebration, war and facing enemies, exploring our purpose and identity, and appreciating nature. There are passages of thankfulness, praise and worship to God, as well as cries for help. The people who wrote the psalms were honest about their emotions and weren't freight to write it all down. When reading the Psalms, bear in mind that they were meant to be sung and not read: it's a bit like sitting and reading the lyrics to your favorite song.

### WHY READ IT?

Psalms show us that we can bring all our emotions and situations to God. We can talk to God however we are feeling - angry, upset, confused, fearful, happy or excited - and even if we are feeling one of these emotions because of him. The psalms also show us that whether we feel near to God or far from him, he hears us and wants us to talk to him.

THE PSALMS WERE WRITTEN BY LOTS OF PEOPLE AND COVER A LONG TIMESPAN - BETWEEN 1400 AND 586BC!

## THE LETTERS JAMES

WRITTEN: PROBABLY BEFORE AD62

### WHAT YOU NEED TO KNOW:


This letter was written by James rather than to him, and it was written to all Christians everywhere rather than in a specific location. James was based in Jerusalem, where politics between the Jews and the Romans had become pretty tense. Yet he makes it very clear that no matter what our situation, if we follow Jesus, we can't live like people who don't.

### WHY READ IT?

This is a brilliant letter. It's hugely practical and talks about the importance of living out our faith in the world. It's very direct, but if you want a life that looks more like the life of Jesus, then this letter is or you.

### KEY CHARACTER:

The James who wrote this book is thought to have been the half-brother of Jesus. However, he decided that Jesus was who he claimed to be only after he had seen Jesus risen from the dead. James lived in a tough environment in Jerusalem, where he led a church, and he ended up being killed for his faith in his brother Jesus.



ՀՊԱՍՏՈՒՆԻՅԱՆ ԳԵՐ. Տ. ԲԱՐՅԷԼ ԱՐԹԵՌԻՍՏՈՍ ՉԱՐԵԱԿ  
ԿԱՐԱՆԵՐՈՒԹԵԱՐ ՔՐԻՍՏՈՒՅԱՆ ԳԱՍՏԱՐԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՇԱՄՈՒՆՆԵՐ  
ՆՈՅՆԵՐԸ՝  
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՍՏՈՒԱԾԱՇԱՇՈՒՆՉԻ ԱՄԻՍ

Նոյնները՝ Աստուածաշունչի Համաշխարհային Ամիս



Ազգային Առաջնորդարան  
Armenian Prelacy of Canada  
Prélature Arménienne du Canada

514-856-1200  
prelacy@armenianprelacy.ca  
www.armenianprelacy.ca

Խմբագիր՝ Հոգեշնորհ Տ. Յակոբ Վրդ. Եագուպեան  
3401 Olivar Asselin Montréal, Québec H4J 1L5